ՆԱԽԱԳԻԾ /4

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2013 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 18-Ի N 372-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով <<Գնումների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 4-րդ հոդվածը և <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 1-ին մասը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշում է՝

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի ապրիլի 18-ի <<Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի փետրվարի 10-ի N 168-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին>> N 372-Ն որոշման 2-րդ կետը շարադրել նոր խմբագրությամբ.

<<2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից՝ բացառությամբ սույն որոշման 1-ին կետի 3-րդ ենթակետի <<ե>> պարբերության, որն ուժի մեջ է մտնում 2014 թվականի հունվարի 1-ից և <<ժէ>> պարբերության, որն ուժի մեջ է մտնում 2013 թվականի օգոստոսի 1-ից:>>:

Դ. Սարգսյան

Document1

Հիմնավորում

ՀՀ կառավարության 18 ապրիլի 2013 թվականի N 29.6/[152397]-13 (15 նիստի արձանագրության քաղվածքի 3-րդ կետով հանձնարարվել էր ՀՀ կառավարություն ներկայացնել որոշման նախագիծ այն մասին, որ ոչ հավաստի ֆինանսական հաշվետվություններ ներկայացրած կամ աուդիտի եզրակացությամբ լուրջ թերություններ ունեցող ձեռնարկություններն իրավունք չեն ունենալու մասնակցելու պետական գնումների գործընթացին:

Նշվածը նախատեսվել էր կարգավորել ՀՀ կառավարության 18/04/2013թ. թիվ 372-Ն որոշման 1-ին կետի 3-րդ ենթակետի <ժէ> պարբերությամբ սահմանված առաջին տեղը զբաղեցրած մասնակցի՝ որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերով ներկայացվող ֆինանսական վիճակի գնահատման համար անհրաժեշտ փաստաթղթերը սահմանելով: Միաժամանակ հիշյալ դրույթի համաձայն Ֆինանսական փաստաթղթերի գնահատման կարգը և ցանկը պետք է հաստատի Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարը:

Նկատի ունենալով, որ ՀՀ ֆինանսների նախարարի 20/06/13թ. թիվ 500-Ն հրամանով հաստատվել է <<Ֆինանսական միջոցներ>> չափանիշի գնահատման համար անհրաժեշտ փաստաթղթերի և դրանց գնահատման կարգը, նպատակահարմար է համարվում ՀՀ կառավարության 18/04/13թ. թիվ 372-Ն որոշման 2-րդ կետը խմբագրել և նախատեսել, որ ՀՀ կառավարության 10/02/11թ. թիվ 168-Ն որոշմամբ հաստատված կարգի 83-րդ կետով սահմանված դրույթը ուժի մեջ դրվի 2013թ. հուլիսի 1-ից: